

ԹՈՒՐՓԻԱՅԻ ՏԱՐԱԾՈՂԱՆԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ
ԵՎ ՀԱՅ-ԹՈՒՐՓԱԿԱՆ ԱՌԱՋՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1992թ.*

Լուսինե Քեռյան

Խորհրդային Միության փլուզումը համաշխարհային նշանակություն ունեցող մի իրադարձություն էր: Գլոբալ առումով Խորհրդային Միությունը չկարողացավ Արևմտյան-Արևելք մշակութային, քաղաքական և գաղափարական ճեղքածքը լրացնող կամուրջ դառնալ, ինչպես նաև չկարողացավ ստեղծել մարդկության զարգացման իր յուրահատուկ և բնական ուղին: Եվ այսպիսի խայտարդես պետության փլուզումից հետո արևելյան և արևմտյան քաղաքակրթություններն ազդեցության ոլորտների համար պայքար սկսեցին: Արևմտյան թիվ մեկ թշնամու փլուզումը խոչըն տեղաշարժեր առաջացրեց ամբողջ աշխարհում: Այն սկիզբ դրեց արտաքին քաղաքական նոր ուղիների մշակմանն ու իրականացմանը Հարավային Կովկասում, Մերձավոր և Միջին Արևելքում: Այդ գործընթացը մեծ նշանակություն ուներ նաև Թուրքիայի համար:

Աշխարհիկ և արևմտամետ Թուրքիան, որն Արևմտյան համար Արարական աշխարհ - Իրան - Խորհրդային Միություն եռանկյունում ռազմավարական նշանակություն ուներ, նոր դեռ և նշանակություն ստացավ Խորհրդային Միության փլուզումից հետո: ԽՍՀՄ նախկին թուրքական հանրապետություններ տանող ուղու վրա գտնվող Թուրքիան հակախորհրդային հենակետից վերածվեց Անդրկովկաս և Միջին Ասիա տանող կամրջի: Թուրքիայի նշանակությունը Արևմտյան համար կարևորվում էր նաև այն դերով, որն Անկարան կարող էր ստանձնել նախկին թուրքական հանրապետություններին զարգացման արևմտամետ ուղու վրա դնելը: Կաշինգտոնում և Բրյուսելում համոգված էին, որ Թուրքիան՝ Աղրբեջանը և Միջին Ասիան Արևմտյան հետ կապող օղակ հանդիսանալով, կրացի ճանապարհը նավթով և բնական գազով հարուստ այդ երկրների բնական հարստությունների արդյունահանման համար՝ միաժամանակ հնարավորություն տալով Աղրբեջանին և միջինասիական երկրներին մուտք գործել և ինտեգրացվել միջազգային շուկայում, այսպիսով թուլացնելով տնտեսական և հետևաբար նաև քաղաքական կախվածությունը Ռուսաստանից: Ենթադրվում էր նաև, որ ակտիվ քաղաքական և տնտեսական լժակներ ստանալով տարածաշրջանում՝ Թուրքիան կարող էր «գաղափարապես» միավորել նախկին ԽՍՀՄ թուրքական հանրապետությունները՝ նպաստելով այդ երկրներում աշխարհիկ, «դեմոկրատական» կարգերի հաստատմանը, չեզոքացնելով հակարինմտյան լիւամական արմատականության ջամփերը տարածաշրջանում: Շահավետ տնտեսական ծրագրերի իրագործմանը Թուրքիայի հղորացումը դիտարկվում էր որպես ՆԱՏՕ-ի դիրքերի ամրապնդում:

Այս բոլորը համահունչ էր Աղրբեջանի և Միջին Ասիայի թուրքական հանրապետությունների նկատմամբ Թուրքիայում տարածվող հաճոյախոսություններին: Թուրքիան միշտ էլ ծգտել է իր գիշավորությամբ թուրքական հանրապետությունների միություն ստեղծելու: Խորհրդային Միության փլուզումից ի վեր թուրքական մամուլում լայն տարածում ստացավ «Աղրիատիկ ծովից մինչև Զինական պարիսապ» ծգվող թուր-

* Հոդվածն ընդունվել է 09.12.2014:

Հոդվածը տպագրության է Երաշխավորել ք.գ.դ., պրոֆեսոր Գարիկ Քեռյանը:

ՄԵՄՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍՏԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

քական աշխարհի միավորման գաղափարը: Միության ստեղծման ուղու վրա առաջին քայլն էր համարվում տնտեսական և մշակութային ամուր կապերի հաստատումը և զարգացումը: Այդ նպատակով Թուրքիայում ակտիվ աշխատանքներ տարբեցին տարածաշրջանային տիպի կազմակերպություններ ստեղծելու ուղղությամբ, որոնց գործունեությունը պետք է բարձրացներ Թուրքիայի կշիռը հատկապես տարածաշրջանի տնտեսական կյանքում: Դրանք էին Սևորվան տնտեսական համագործակցությունը[1] և Տնտեսական համագործակցության կազմակերպությունը[2]:

Թուրքիայի նախաձեռնությամբ ստեղծված ՍԾՀ-ն իր կազմում է ընդգրկում է 11 երկիր՝ Ռուսաստան, Ուկրաինա, Հյանաստան, Սուդովա, Ադրբեյչան, Թուրքիա, Հունաստան, Ումինիա, Բուլղարիա, Վրաստան և Ալբանիա: Աշխարհագրական տեսակետից այդ կազմակերպության գործունեության դաշտը ընդգրկում է մոտ 300նկ քնակչությամբ մի շուկա և քնական ռեսուրսներով հարուստ մի տարածաշրջան, որը կարող էր առանցքային կետ դառնալ երեք մայրցամաքների տարանցիկ առևտորի համար[3]: ՍԾՀ շրջանակներում նախատեսվում էր համագործակցությանը անհրաժեշտ բոլոր օղակների, այդ թվում քանդակային համակարգի ստեղծում: 1993թ-ին Սոֆիայում կայացած արտգործմախարաների մակարդակով Յ-րդ գագաթնաժողովի ժամանակ որոշվեց ստեղծել ՍԾՀ Առևտորի և զարգացման բանկ՝ 1,4 մլրդ դոլար դրամագիլիով: 1995թ-ի ապրիլին կայացած 5-րդ գագաթնաժողովի ժամանակ որոշվեց մասնաքայլների այն չափը, որը մասնակից երկրները պետք է ներդնեն քանկի հիմնադիր դրամագիլու: Բանկի հիմնադրման վայրը ընտրվեց Հունաստանի Սալոնիկ քաղաքը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հունաստանը ՍԾՀ անդամ երկրներից միակն է, որ մտնում էր Եվրոպիության մեջ, իսկ Սալոնիկը բավականին զարգացած ֆինանսական ենթակառուցվածք ունեցող քաղաք է [4]:

1992թ-ի օգոստոսին Թուրքիայի և Ռուսաստանի կառավարությունները հանդես եկան սևորվան շրջանի երկրներում մշակութային, կրթական և լրատվական ազատ տարածք ստեղծելու նախաձեռնությամբ: Այս հարցի նախնական քննարկումները 11 երկրների ներկայացուցիչների մասնակցությամբ տեղի ունեցան նույն թվականի նոյեմբերին Դագոմիշում: 1993թ-ի մարտի սկզբին թուրքական կողմից հրավերով Ստամբուլում տեղի ունեցան փորձագետների նիստեր, որոնց ընթացքում նախատեսվող համաձայնագիրը վերջնական տեսք ստացավ: 1993թ-ի մարտի 6-ին Ստամբուլում 10 մասնակից երկրների (չէր մասնակցում Հունաստանը) կառավարությունների ամունից մշակույթի նախարարները ստորագրեցին Սևորվան մշակութային համագործակցության համաձայնագիր, որն օրենքի ուժ էր ստանալու երկրների բարձրագույն օրենսդիր մարմինների կողմից Վավերացվելուց հետո[5]:

Թուրքիայի նախաձեռնությամբ ստեղծված տնտեսական մյուս կազմակերպությունն էր Տնտեսական համագործակցության կազմակերպությունը, որի մեջ էին մտնում Թուրքիան, Իրանը, Պակիստանը, Աֆղանստանը, Ադրբեյչանը և միջինասիական հինգ հանրապետությունները՝ Ղազախստանը, Ուզբեկիստանը, Ղրղզստանը, Թուրքմենստանը և Տաջիկիստանը: Այսպիսով՝ գծվեց Թուրքիայի քաղաքական և տնտեսական հետաքրքրությունների աշխարհագրական այն շրջանակը, որտեղ Թուրքիան ակտիվ տնտեսական և քաղաքական գործունեություն էր ծավալելու՝ համապատասխան կազմակերպությունների շրջանակներում:

ԽՍՀՄ-ում սկսած քայլայման գործնթացը համընկավ Թուրքիայի տնտեսության զգալի աճին և արժեգույնան տեսմանը մեղմացմանը, որի կապակցությամբ ասպարեզ եկամ «քուրքական տնտեսական հրաշքի» և «զարգացման թուրքական ուղղու» վերաբերյալ գաղափարները մեծապես բարձրացրին Թուրքիայի վարկը խորհրդային մու-

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

սուլմանական հանրապետություններում, որտեղից էլ առաջ քաշվեց «թուրքական մողելի» ընդօրինակման նպատակահարմարության տեսակետուր: Այդ տեսակետների ամրապնդմանը մեծապես նպաստում էին ԱՄՆ և Եվրոպական Միությունը: Թուրքիայում մեծ աշխատանք ծավալեցին Աղրբեջան և Միջին Ասիա գաղափարախոսական ներթափանցման համար, նախևառաջ կրթության և զանգվածային լրատվության միջոցով [6]: Արդեն 1992թ-ի մարտին նախկին միության թուրքակեզու հաստված համդիսացող Նախիջևանի հետ տարված աշխատանքներն արդյունք տվեցին: Մարտի 24-ին Անկարայում Նախիջևանի հնքանվար Հանրապետության Գերագույն Սեզիսի նախագահ Ալիկը և վարչապետ Ս. Ղեմիրեկը ստորագրեցին համագործակցության պայմանագիր: Համաձայնագրով նախատեսվում էր, որ, տնտեսական, մշակութային և գիտատեսական համագործակցությունից բացի, կողմերը միջոցներ կձեռնարկեն, որպեսզի Նախիջևանում հեռարձակվեն թուրքական հեռուստատեսության ծրագրերը և նախիջևանցի ուսանողներին թուրքական համալսարաններում սովորելու հնարավորություններ ստեղծվեն: Համանան պայմանագրեր հետագայում ստորագրվեցին նաև Աղրբեջանի և միջինասիական հանրապետությունների հետ: Դրանով արվեց այն առաջին քայլը, որը պետք է նպաստեր Թուրքիա-Աղրբեջան-Միջին Ասիա գործուն կապի և համագործակցության հաստատմանը:

Թուրքիայի հետագա քաղաքական և տնտեսական ծրագրերի իրականացման համար ի սկզբանե կարևոր էր Աղրբեջանը: Կս տեսակետից հետաքրի է այդ երկրի կարևորության բնորոշումը թուրքական մամուլում: «Սարահ» թերության հրապարակված առաջնորդողի այս տողերը շատ բնորոշ են. «Աղրբեջանը Թուրքիան Միջին Ասիայի թուրքալեզու հանրապետությունների հետ կապող կամուրջն է... Աղրբեջանի նկատմամբ մեր հետաքրի թուրքությունը երեք հիմնական պատճառ ունի».

1. Աղրբեջանիները մեր եղայրներն են, մենք ուզում ենք, որ նրանք լավ վիճակում լինեն:
2. Աղրբեջանը Կովկասի ոգին է, դեպի Միջին Ասիա բացվող դուռը, մեզ թուրքալեզու հանրապետությունների հետ կապող շղթայի առաջին և ամենակարևոր օղակը:
3. Աղրբեջանի նավթը համաշխարհային շուկա հանելով՝ Թուրքիան նույնպես մեծ տնտեսական ուժ ձեռք կբերի»[7]:

Համաձայն նոյն թերթի՝ աղրբեջանական նավթը, նավթամուլով Միջյաթ (Մարդինի մոտ) հասցնելով, այնտեղից ուղղելով դեպի Յումուրդալը և միացնելով Իրաքից եկող նավթամուլին, այն կարելի է դուրս բերել դեպի Իսքենդերունի ծովածոց: Նախատեսվում էր նաև, որ հետագայում նավթամուլին պետք է միանար նաև Պազախստանից Կասպից ծովի հատակով զցված մեկ այլ նավթամուլ, ինչպես նաև մեկ այլ խողովակով Թուրքիա պետք է հասցեր Թուրքմենստանի գագը: «Աղրբեջանական և ղազախական նավթով Իսկենդերունում 1մլն բարրել հղորությամբ նավթային բորսա ստեղծելու դեպքում Թուրքիան կարևոր տեղ կզբաղեցնի համաշխարհային նավթային շուկայում»[8]:

Այս ծրագրերի իրականացումը մեծ ջամփեր և ճկումություն էր պահանջելու Թուրքիայից: Անկայուն իրավիճակը Անդրկովկասում, պատերազմական գործողությունները նավթուղու հնարավոր եղթուղիների շրջաններում, Ուսասատանի քաղաքականությունը տարածաշրջանում և Միջին Ասիայում, բարդություններ էին ստեղծում թուրքական ծրագրերի իրականացման համար: Այդ ծրագրերի իրակականացումը առնչվում էր նաև հայ-թուրքական հարաբերությունների հետ: Հայաստանի աշխարհագրական դիրքը կարևորում է հայ-թուրքական բնականոն հարաբերությունների առկայությունը

ՄԵՄՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

թուրքական տնտեսական ծրագրերի համար: Խորհրդային Միության վլուգումից հետո Թուրքիայի նախկին թուրքալեզու հանրապետությունների նկատմամբ ստանձնած դերը թույլ չտվեց որոշակի ձևունություն ցուցաբերել Հայաստանի նկատմամբ հարաբերություններում, որոնք 90-ական թվականներին զարգացան երեք փուլով՝ 1991թ.-ի վերջ-1993թ.-ի ապրիլ, 1993թ.-ի ապրիլից մինչև 1994թ.-ի երկրորդ կեսը և 1994թ. երկրորդ կեսից սկսած ցայսօր:

1991թ.-ի սեպտեմբերի 21-ի հանրաքվեով և սեպտեմբերի 23-ի հրչակագրով Հայաստանը դարձավ անկախ և ինքնիշխան հանրապետություն: Նորանկախ Հայաստանի առջև էր ծառացած երկրի միջազգային իրավասուրյեկտության հաղորդ: Անկախությունից անմիջապես հետո Հայաստանի Հանրապետությունը ճանաչվեց հարյուրից ավելի պետությունների կողմից [9]: Օրակարգում էր դիվանագիտական հարաբերությունների հաստատումը մի շարք երկրների հետ, ինչպես նաև << մասնակցությունը միջազգային խոշոր և կարևոր կազմակերպություններին և պայմանագրերին: 1992թ. հունվարին Հայաստանը ընդունեց Եելսինկյան վերջնական փաստաթուղթը, ինչպես նաև Նոր Եվրոպայի Փարիզի խարտիայի և Եվրոպայի Անվտանգության և Համագործակցության խորհրդի բոլոր փաստաթորթերը: 1992թ. մարտի 4-ին <<-ը դարձավ ՄԱԿ-ի անդամ և հնարավորություն ստացավ ավելի սերտորեն ներգրավվել «ազերի համաշխարհային ընտանիքի մեջ» [10]: Այսպիսով՝ ստեղծվում էր միջազգային իրավական դաշտ, որի հիմնան վրա Հայաստանը պետք է իրազերժեր իր արտաքին քաղաքականությունը և կարգավորեր իր հարաբերությունները հարևան երկրների հետ: Հայաստանի կողմից Եելսինկյան փաստաթորթերի, Փարիզի խարտիայի և ԵԱՀՆ փաստաթորթերի ստորագրումն ու համապատասխան միջազգային պարտավորությունների (պետությունների տարածքային ամբողջականության ճանաչում, տեղորդիզմի դատապարտում և պայքար նրա նեն և այլն) ստանձնումը յուրովի գնահատվեց և Թուրքիայում դրական արձագանք ստացավ: Թուրքիան գրիունակությամբ ընդունեց ստորագրման փաստը և պատրաստակամություն հայտնեց համագործակցելու << հետ ԵԱՀՆ գործնականությունը: Ըստ Երևանյան, վերոիիշյալ փաստաթղթի ստորագրումը << կողմից Անկարայում փորձեցին որակել որպես նահանջ 1990թ. օգոստոսի 23-ին ընդունված Անկախության հրչակագրի համապատասխան կետի սկզբունքից: Անկախությունից ի վեր հայ-թուրքական հարաբերությունների հաստատման հարցում առաջին քայլը արվեց դեռևս 1991թ-ի նոյեմբերին: Նոյեմբերի 14-ին Անկարան պաշտոնական նոտայով դիմեց Հայաստանին Երևանում գլխավոր հյուպատոսություն բացելու խնդրանքով, ինչը մնաց անպատասխան: [11] Ընդամենը երեք տարի անց Թուրքիան քաղաքական մի շարք նախապայմաններով դիմավորեց դիվանագիտական հարաբերությունների հաստատման վերաբերյալ Հայաստանի առաջարկը: Փետրվարի 10-ին ԼՂ գորքերի կողմից հիմնականում մեսխեթի թուրքերով բնակեցված Խոջալուի շրջանի հենակետի գրավումից հետո թուրքական մամուլում մեծ աղմուկ բարձրացվեց: Թուրքիայի ԱԳ նախարար < Զեթինը Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու վերաբերյալ թուրք դիվանագետների հետ հանդիպման ընթացքում հայտարեց, թե Թուրքիայի հասարակական կարժիքը բավարարենու համար ԵԱՀՆ փաստաթորթի ստորագրումը բավարար չէ Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ սկսելու համար[12]:

Հակահայկական արշավանքը թուրքական մամուլում ապրեց մարտի սկզբներին, երբ Հայաստան գործուղվեց Մուսկվայում Թուրքիայի դեսպան Վոլքան Վոլուրալը, որի նպատակն էր, ըստ թուրքական մամուլի, վերջնականապես ճշտել Հայաստանի դիրքերը դարձարադայան հակամարտության և հայ-թուրքական հարաբերություններ սկսելու համար[12]:

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

յունների վերաբերյալ: Դրան հաջորդեց թուրքական մի շարք ազդեցիկ թերթերի թղթակիցների և հայտնի թուրք լրագրող Մեհմեն Ալի Բիրանդի այցը Երևան: Լրագրողների այցելության գիլավոր նպատակն էր պարզել հայկական կողմի դիրքորոշումը հետևյալ հարցերում:

1. Արդյոք, Հայաստանը չի հաժարվել Թուրքիայի հետ հարաբերությունները գարգացնելու մտադրությունից:
2. Պատրա՞ստ է արդյոք Հայաստանը զիջումների գնալու պահանջատիրության և ցեղասպանության հարցերում:
3. Ինչպիսին է տեսնում Հայաստանը ԼՂ հարցի վերջնական լուծումը:

Թուրքական հասարակական կարծիքը հետաքրքրող տվյալ հարցերի բնույթը ամենակին էլ պատահական չէր. «Հետ հարաբերություններում Թուրքիան առաջ էր քաշում նախապայմաններ: Վ. Կուրալի՝ Երևան կատարած այցից հետո թուրքական մամուլը, անդրադառնալով Հայաստան-Թուրքիա հարաբերություններին և Լեռնային Ղարաբաղի հարցին, հիշատակում է տիխրահօչակ «տարածքային փոխանակումների ծրագիրը», որով Կուրալը իբրև թե հանդես է եկել Երևանում[13]: Թուրքական դեմարշը, կապված Ղարաբաղում տեղի ունեցած փետորվայրան հրատարձությունների հետ, վնասեց նշանակություն հայ-թուրքական տնտեսական համագործակցության փորձերին: 1991թ-ի նոյեմբերից սկսած՝ ծագումով հրեա թուրք գործարար Իցիակ Ալարոնը «Ալարկո Հոլդինգ» բաժնետիրական ընկերության սեփականատեր և նախագահ, ամերիկահայ գործարար, Ամերիկայի Հայկական համագումարի նախագահ Հրայր Հովհաննանի հետ ծրագրեր էր կազմում Տրավիզոնի նախահանգստում Հայաստանի համար տերմինալ ստեղծելու վերաբերյալ: Փետրվարին թուրքական մամուլում բարձրացված հակահայկական արշավը հարվածեց նաև Ալարոնին, որը բննադրատվեց հայերի հետ համագործակցելու համար: Արդյունքում՝ վերջինս հրաժարվեց ծրագրից[14]:

Իրադարձությունների զարգացման այս ֆոնի վրա Ամկարայում և Երևանում մեծ նշանակություն էր տրվում ամենաբարձր մակարդակով հանդիպման հնարավորությանը: Մարտի սկզբում «Միլլիեթ» թերթի թղթակցի հարցերին պատրասխանելով՝ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը իր պատրաստակամությունը հայտնեց հայ-թուրքական հարաբերությունները նախագահ Թ. Օզալի և Վարչապետ Ս. Ղեմիրելի հետ քննարկելու թե՝ Ամկարայում՝ և թե՝ վերջինիս հյուրընկալելով Երևանում: Նախագահը նշեց, որ հունիսի 25-ին արդեն նախատեսվում է իր այցը Թուրքիա ՍՇՏՀ հոչակագրի ստորագրման կապակցությամբ: Սակայն ավելի ցանկալի էր, քան նախագահի, որ նախ հանդիպեն Երևանում արտգործնախարարները:

Արտգործնախարարներ Ռ. Հովհաննիսյանի և Հ. Զեթինի հանդիպումը տեղի ունեցավ 1992թ. մարտի 25-ին Հելսինկիում իր աշխատանքները սկսած ԵԱՀՆ կոնֆերանսի ընթացքում: Հանդիպման ժամանակ կողմերն արծարծեցին հայ-թուրքական հարաբերությունների և Ղարաբաղյան հիմնահարցի կարգավորման խնդիրները: Համաձայն թուրքական մամուլի՝ Ռ. Հովհաննիսյանը հանդես էր եկել բանավոր հայտարարությամբ, որում նշել էր, որ «Հ-ը Թուրքիայից հողային պահանջներ չունի» [15]: «ՀՀ Անդամակիցների միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման արծանագրությունների նախագիծ: Ղարաբաղյի խնդիրի վերաբերյալ կողմերը համաձայնության եկան՝ «Եռակողմ բանակցությունների» հարցում: Բանակցություններին պետք է մասնակցեին Հայաստանը, Արդրեջանը, իսկ Ղարաբաղյի պատվիրակության կազմում Արթուր Մկրտչյանը: Նախատեսվում էր, որ հանդիպումները կայանան Մուսկայում, Մինսկում կամ Ալմարայում, սակայն որևէ ժամկետ չսահմանվեց: Զեթինի մեկնաբանությամբ

ՄԵՐՐՈԴ ՄԱՆՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

«Եռակողմ բանակցությունների» նպատակը լինելու էր «մնայուն գինադադարի հաստատումը» [16]: 1992թ-ի մարտ ամսից սկսած Թուրքիայի՝ Հայաստանի նկատմամբ դիրքորոշման մեջ նկատվում է համակարգային մոտեցում: Թուրքիան ակտիվորեն սկսում է միջամտել հայ-ադրբեջանական հարաբերություններին շեղվելով Հայաստանի Հանրապետության հետ հարաբերություններ հաստատելու սկզբնական մոտեցումներից: <<ԱԳ նախարար Ռ.Հովհաննիսյանը, ապրիլի վերջերին «Հայաստանի Համրապետություն» թերթերին տված հարցագրություն անդրադառնալով այդ հարցերին, նշում է. «Այն ըմբռնումը, որ սկզբում տեղ էր գտել Թուրքիայի և Հայաստանի միջև, այն է՝ կանոնավորել հարաբերությունները առանց որևէ քաղաքական նախապայմանի, կամաց-կամաց խախտվում էր Թուրքիայի կողմից և, խչընդոտներ հարուցելով, Թուրքիան նահանջ էր արձանագրում այդ քաղաքականությունից» [17]:

Թուրքական կողմի մոտ նկատվող փոփոխությունները կարելի է պատճառաբանել մի քանի հանգամանքներով: Նախ՝ խոչազուի իրադարձությունները մեծ դժգոհություն առաջացրին Թուրքիայում: Այդ իրադարձությունների շուրջ բարձրացած աղմուկը ներքին տեղաշարժեր առաջացրեց Ադրբեջանում թուլացնելով Ա.Մութավիլիովի դիրքերը և երկիրը կանգնեցնելով ամիշխամության և ներքին երկայառակությունների շեմին, ինչը ստիպեց Թուրքիային ստանձնելու «ծանրության կենտրոնի» դերը Ղարաբաղյան խնդրում: Ազակցելով Ադրբեջանին՝ Թուրքիան կարող էր ծախողել Իրանի՝ հիմնահարցի խաղաղ կարգավորման միջնորդի դերը ստանձնելու գործը: Դրան գուգադիպեց Լեռնային Ղարաբաղի գործերի կողմից Շուշիի գրավումը 1992թ-ի մայիսի 9-ին՝ այն պահին, երբ Իրանի հւամական Հանրապետության նախագահ Ռաֆսանջանի միջնորդությամբ բանակցություններ էին ընթանում << նախագահ I. Տեր-Պետրոսյանի և Ադրբեջանի նախագահի պաշտոնակատար, Գերագույն խորհրդի նախագահ Յ.Մամեդովի միջն:

Շուշիի, իսկ այնուհետև Լաշինի գրավումն ու մարդասիրական միջանցքի բացումը Հայաստանի և ԼՂ-ի միջև մի շարք կարևոր հետևանքներ ունեցան: Նախ՝ ռազմաճակատի գիծը հեռացվեց մայրաքաղաք Ստեփանակերտից և հայերի ծեռքն անցավ ռազմավարական մեծ նշանակություն ունեցող Շուշի քաղաքը: Լաշինի միջանցքի գրավումով ԼՂ-ը ճեղքեց Ադրբեջանի կողմից ստեղծած շրջափակումը և ռազմավարական նշանակություն ունեցող կապ հաստատեց արտաքին աշխարհի հետ: ԼՂ-ը ռազմական և աշխարհագրական տեսակետից դադարեց անկապ լինելուց: Ղարաբաղյան բանակի հաջողությունները բերեցին Յաղուր Սամեղովի մայիսի 18-ի հրաժարականին՝ ճանապարհ հարթելով իշխանության ծգոտող Ազգային ճակատի համար [18]: Եվ վերջապես ի չիք դարձան Իրանի միջնորդական ջանքերը և Թուրքիան, այսուհանդերձ, պետք է ծգուեր ստանձնելու Իրանի դերը:

Լաշինում և Շուշիում կրած անհաջողություններին գուգահեր որոշ թուրքամետ տարրեր Նախիջևանում սադրիչ գործողությունների դիմեցին հայ-ադրբեջանական սահմանի վրա: Միջադեպը նախօրոք պահանակությամբ զայրույթի ալիք բարձրացրեց Թուրքիայում, հնչեցին Նախիջևանում ռազմական միջամտություն կատարելու կոչեր: Իրադարձությունների կապակցությամբ հրավիրվեց նախարարների խորհրդի նիստ, որը քննարկեց ստեղծված իրավիճակը: Ռազմատենչ կոչերի և հակահայկական արշավանքի ալիքը անկում ապրեց այն բանից հետո, երբ ԱՊՀ գինված ուժերի հրամանատար Հապոշնիկովը հայտարարեց, թե Նախիջևանում թուրք գինված ուժերի հավանական միջամտությունը կարող է բերել երրորդ համաշխարհային պատերազմի: Իրադրությունը փորձեց փրկել Նախիջևանի մեջիսի նախագահ Հ.Ալիկը, որը հայտարարեց, թե ռազմական միջամտության կարիք չկա և Օզալի ու Ղեմիրեկի հայտարա-

ՄԵՍՐՈՊ ՄԱՆՏՈՎ ՀԱՍԱՍՏԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

րությունները բավական են: Թուրքական կողմն իր ջանքն ու եռանդը տեղափոխեց դիվանագիտության ոլորտ: Մայիսի վերջին Հեյմինկիում կայացած ԵԱՀՆ նիստում թուրքիան փորձ արեց ՀՀ դատապարտող մի բանաձև անցկացնել, որը սակայն չընդունվեց: ԵԱՀՆ-ին ՀՀ մշտական անդամակցության քայլերը նույնպես արդյունք չտվեցին:

Նոյն ժամանակահատվածում ձեռնարկվեցին ևս մի շարք քայլեր, որոնք ընդհանուր առնամբ կարող էին որոշակի հոգեբանական ազդեցություն ունենալ: Թուրքական կողմը կարծես որդեգրում էր հարևանների հետ խնդիրների լուժման մարտավարություն: Հունաստան պաշտոնական այց կատարող թուրքական պետնախարար Զավիդ Չաղլարը առաջարկեց ստորագրել թուրք-հունական բարեկամության և համագործակցության պայմանագիր: Մայիսի 21-ին դիվանագիտական հարաբերություններ հաստատվեցին Թուրքիայի և Կրաստանի միջև, իսկ արտգործնախարար Հ. Զեթինը այցելեց Կրաստան և հանդիպեց Է. Շևարնադեհի հետ: Այս հանգամանքը նպաստավոր էր շփումները շարունակելու համար:

1992թ հունիսի 3-ից 7-ը Իզմիրում կայանալիք Թուրքիայի տնտեսությանը նվիրված երրորդ Միջազգային կոնֆերուսին հրավիրվեց նաև ՀՀ պատվիրակությունը, որը գլխավորեց փոխվարչապետ, Էկոնոմիկայի նախարար Հրանտ Բագրատյանը: Կոնֆերուսի շրջանակներից դուրս տեղի ունեցան մի շարք կարևոր հանդիպումներ, որոնցից Հ. Բագրատյանը կարևորեց հանդիպումը Ս. Ղեմիրեկի հետ [19]: Բագրատյանը Ղեմիրեկին փոխանցեց Լ. Տեր-Պետրոսյանի նամակը, որում արձարձակած էր երեք կարևոր խնդիր:

1. Ստահոգությունը Հայաստանի և Թուրքիայի միջև դիվանագիտական հարաբերությունների վերաբերյալ և Հայաստանի դիրքորոշումը այդ հարցում,
2. ՀՀ տեսակենուր ԼՂ-ի հարցի և նրա լուժման վերաբերյալ,
3. Նախիջևանի խնդիր:

Ղեմիրեկի և Բագրատյանի հանդիպման ժամանակ կողմերը եկան մի շարք ընդհանուր հետևողությունների: Նախ՝ ընդգծվեց ընդհանուր համաձայնությունը տարածաշրջանում արևկա բոլոր խնդիրները խաղաղ ճանապարհով լուծելու մասին: Երկրորդ՝ եթե Թուրքիան բարելավի հարաբերությունները Հայաստանի հետ, հատկապես տնտեսական բնագավառում, ապա դա միայն դրական ազդեցություն կունենա հայ-ադրբեջանական հականարտության խաղաղ կարգավորման գործընթացում: Երրորդ՝ կողմերը շահագրգուզած են տարածաշրջանում կայունության հաստատման հարցում: Վարչապետ Ղեմիրեկին փոխանցեց ՀՀ վարչապետի նամակը՝ Հայաստան այցելելու հրավերով:

Հայաստանի կառավարական պատվիրակությունը Թուրքիա էր մեկնել տնտեսական երեք կարևոր պայմանագրով, որոնց հրագործումը գործնական ընթացք կտար հայ-թուրքական տնտեսական համագործակցությանը: Այս պայմանագրերը վերաբերում էին առևտորական հարաբերություններին, սահմանամերժ առևտորին և հաղորդակցության ուղիներին: Հայկական կողմի այս առաջարկները ընդունվեցին և Ս. Ղեմիրեկը նշեց, որ դրանք կուտունասիրվեն մոտակա ժամանակներում, և հնարավոր է, որ դրանք կստորագրվեն մինչև հունիսի վերջերը [20]:

Հրանտ Բագրատյանը հանդիպում ունեցավ նաև պետնախարար թ. Զիլերի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվեցին ապրանքափոխանակման ճանապարհով առևտուր անելու հնարավորությունները: Նախատեսվում էր, որ հայկական կողմը կպատրաստի և Թուրքիա կուղարկի արտահանման և ներմուծման համար նախատեսված ապրանքների ցանկը [21]:

Հայկական պատվիրակությունը հնարավորություն ունեցավ հանդիպելու թուրքական լրատվական միջոցների ներկայացուցիչների հետ և Թուրքիայի հասարակական

ՄԵՄՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

Կարծիքը ժանոթացնելու հայկական պաշտոնական տեսակետին՝ հայ-թուրքական հարաբերություններին առնչվող բոլոր հարցերում:

ՀՀ կառուցդական դիրքորոշումն ու մոտեցումները թուրքիայի կողմից համապատասխան քայլերի չարժանացան: ԼՂ-ում էլչիքեյի վարչակարգի ժամանակավոր ռազմական հաջողությունները, մասնավորապես Շահումյանի շրջանում, թուրքիայում որդակի պատրանքներ ստեղծեցին: 1992թ. հունիսի 14-ին Որի դեմք ժամերիոյում կայացած Տեր-Պետրոսյան-Դեմիրել հանդիպման ընթացքում վերջինս, համաձայն թուրքական մամուլի, նշել է, որ Հայաստանը շրջապատված է Աղրեջանով և Թուրքիայով, և մինչև որ Հայաստանը նրանց հետ բարեկամական հարաբերություններ չհաստատի, այն հայտնվելու է լուրջ խնդիրների և դժվարությունների առաջ: Անդրադարնալով ԼՂ-ի խնդրին՝ նա նշել է, որ եթե Հայաստանը խաղաղություն է ուզում, ապա նա պետք է նախնառաջ հեռանա Շուշիից և Լաշխից[22]:

Հունիսի երկրորդ կեսերին՝ ՍԾՏՀ հոչակագրի ստորագրման նախօրեին «Միլի-յեթ» և «Հյուրիյեթ» թերթերում հոդվածագիրները, վկայակոչելով թուրքիայի ԱԳՆ պատասխանատու աշխատակիցների, հայտնեցին, թե արտգործնախարար Չերինը միջազգային աւոյաններ՝ առաջին հերթին ԵԱՀՆ է ներկայացրել կամ ներկայացնելու է Պարաբաղի հիմնահարցի լուծման մի ծրագիր, որի բաղկացուցիչ մասն էր «զոյգ միջանցքների մասին» վարկածը: Թուրքիայի իշխանությունները պաշտոնապես լիովին չբացահայտեցին խնդրո առարկան, սակայն թուրքական մեկնաբանները շարունակեցին երբեմն-երբեմն անդրադարնալ «զոյգ միջանցքների» տարբերակին՝ հղումներ կատարելով թուրք դիվանագետներին:

Այդ տարբերակի էռթյունը հետևյալն էր.

1. Աղրեջանը Հայաստանին է զիջում ՀՀ և ԼՂ-ի միջև գտնվող տարածքի որոշ մասը (10կմ լայնությամբ)՝ այսպիսով ապահովելով վերջինիս կազմ Հայաստանի հետ:
2. Դրա փոխարեն Հայաստանը Զանգեզուրի շրջանում 30կմ-անոց միջանցք է տրամադրում Աղրեջանին՝ ապահովելով մշտական կազմ Նախիջևանի հետ[23]:

Կարելի է ենթադրել, որ այս ծրագիրն է եղել Թուրքիայի միջնորդական փորձերի նպատակակետը: Ծրագրի նկատմամբ ի սկզբանե Հայաստանի որդեգրած դիրքորոշումը պատճառ էր դարձել Թուրքիայի կողմից Հայաստանի վրա գործադրվող ճնշման հզրուացմանը: Որոշակի վերապահումներով դրա պատասխանը կարելի է համարել օգոստոսի կեսերին Ստամբուլում ՍԾՏՀ արտգործնախարարների մակարդակով կայացած զագաթնաժողովի ընթացքում արտգործնախարար Ռ.Հովհաննիսինի ելույթը, որում նա քննադատեց Թուրքիային՝ Հայաստանի նկատմամբ դրսորվող վերաբերունքի, ինչպես նաև Արցախի հարցում միակողմանի դիրքորոշման համար: Արտգործնախարար նշեց, որ եթե Թուրքիան ցանկանում է Հայաստանի հետ հարաբերություններում բացել իին խաղաղութերը, ապա Հայաստանը կարող է առաջ քաշել ցեղասպանության և Կիպրոսի հարցերը: Այս, ինչպես նաև մի շարք այլ օրյեկտիվ մեղադրանքները Թուրքիայի նկատմամբ մեծ վրդովնունք առաջացրին թուրքական կարավարող շրջանակներում[24]:

Արտգործնախարար Ռ.Հովհաննիսիանի և նախագահ Լ.Տեր-Պետրոսյանի միջև գոյացած տարածայնությունները պատճառ դարձան 1992թ. հոկտեմբերի 20-ին Ռ.Հովհաննիսիանի հրաժարականի ընդունմանը: Հայաստանյան որոշ շրջանակներ

ՄԵՐՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

անմիջապես գուգահեռներ անց կացրեցին ՌՀովիաննիսյանի ստամբուլյան ձարի և հրաժարականի միջն, սակայն կարելի է ենթադրել, որ պատճառներն ավելի խոր են:

1992 թվականի սեպտեմբերի վերջերին ԱՄՆ կատարած այցելության ժամանակ նախագահ Լ. Պետրոսյանը հանդիպեց արտգործնախարար Զերինի հետ, ինչի ընթացքում մի շարք սկզբունքային համաձայնություններ կայացվեցին: Համաձայն թուրքական մամուլի՝ << նախագահը պաշտոնական հայտարարություններ էր արել Թուրքիայի նկատմամբ հողային պահանջներ չունենալու և ցեղասպանության հարցը պատմությանը թողնելու վերաբերյալ: Թուրքիայի ԱԳ Նախարարությունը Մուսկայում իր դեսպանության միջոցով Երևան ուղարկեց արծանագործային նախագիծ, որը, ներառելով այս երկու կետերը, հող էր նախապատրաստում << և Թուրքիայի միջն դիվանագիտական հարաբերությունների հաստատման համար: Զերինը, մամուլի է-ջերում անդրադառնալով իր հանդիպմանը << նախագահի հետ, նշեց, որ Լ.Տեր-Պետրոսյանը տրամաբանական էր համարել Երկկողմանի հարաբերությունների մասին իր մտահոգությունները և ԱՄՆ-ում ունեցած իր «ամենակարևոր տեսակցություններից համարում էր այս մեկը»[25]: Մամուլին տված իր հարցագրույցում Զերինը կարևորեց նաև Աղրբեջանի հարցը հայ-թուրքական հարաբերություններում: Համաձայն արտգործնախարարի՝ Երևան ուղարկված արծանագործային մեջ նշված էր հայկական գորքերի՝ Աղրբեջանից դուրս բերման և ԼՂ-ի քաղաքական կարգավիճակի՝ Մինսկի խմբի հանդիպմանը քննման անհրաժեշտությունը: Զերինը նշեց, որ այդ բոլոր հարցերում նա Լևոն Տեր-Պետրոսյանից ստացավ «ջերմ հասկացողություն»[26]:

Զնյայած Տեր-Պետրոսյան-Զերին հանդիպման արդյունքներին անդրադառնալով թուրքական մամուլը գերադասում էր օգտագործել վարուագում երանգներ, այնուամենայնիվ հայ-թուրքական շփումների աշխուժացումը իր արծագանքը գտավ նաև նավթային ծրագրերում: Դեկտեմբերին թուրքական BOTAS, Աղրբեջանական ազգային նավթային ընկերությունը, British Petroleum և ամերիկյան Pennzoil և Amoco ընկերությունները ստեղծեցին մի համատեղ աշխատանքային խումբ, որը սկսեց մշակել աղրբեջանական նավթի երթուղու Բաքու-Ֆումուրթալը (Թուրքիայի միջերկրածովյան ավ), Բաքու-Նովորոսիյսկ և Բաքու-Բաթում տարբերակները: Նախընտրությունը տրվում էր առաջին տարբերակին՝ Բաքու-Հայաստան(40կմ)-Նախիջևան-Միջյաթ-Յումուրթալը:

Հայ-թուրքական բնականու հարաբերությունների հաստատումը էական երաշխիքներ կստեղծեր նավթամուղի երթուղու այդ տարբերակի իրականացման համար: Թուրքիայի դիրքորոշման պատճառով այս ծրագրերի իրականացումը կախված էր ևս մի գործոնից, որի հետ Անկարայում չեն ուզում հաշվի նատել: 1993թ-ի ապրիլի սկզբներին ԼՂ պաշտպանության բանակի գորքերը մտան Քելբաշարի շրջան՝ տեղափոխելով ռազմական գործողությունները բուն աղրբեջանական տարածք: Այսուհանդերձ Ղարաբաղի խնդիրը սկսեց առանցքային տեղ գրադեմել հայ-թուրքական դիվանագիտական հարաբերությունների հաստատման հարցում, և թուրքական կողմը պայմանավորում էր Հայաստանի Հանրապետության հետ հետագա հարաբերությունները Ղարաբաղի խնդրով:

Այսպիսին էին հայ-թուրքական առնչությունները Հայաստանի անկախության հաստատմանը հաջորդած առաջին տարում, որը պաշտոնատար անձանց հանդիպումների ու քննարկումների քանակով իրավամբ կարելի է համարել ամենահարուստ տարին վերջին երկու տասնամյակների ընթացքում:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. BSEC-USC (Սևծովյան Տնտեսական Համագործակցություն)
2. ECO-SZC (Տնտեսական Համագործակցության Կազմակերպություն)
3. «AGBU» նոյեմբեր 1993թ.
4. «Ազգ» 19 ապրիլի 1995թ.
5. «Ար» 23-30 մարտի 1993թ.
6. Դրա արդյունքը կարելի է համարել լատինատար այբուբենի ընդունումը նախկին միութենական մի շարք թուրքալեզու հանրապետություններում, ինչպես նաև թուրքերենի կարգավիճակը Աղրբեջանում:
7. «Սաբահ» 29 հունիսի 1993թ. ("Sabah" 29 Haziran 1993)
8. Նոյն տեղում
9. Թուրքիան << անկախությունը ճանաչած առաջին պետություններից մեկն էր:
10. «Ազգ» 5 մարտի 1992թ.
11. «Ազգ» 11 նոյեմբերի 1994թ.
12. «Հյուրիեթ» 25 մարտի 1992թ.
13. «Միլլիհեթ» 28 մարտի 1992թ. ("Hüriyet" 28 Mart 1992,
<http://gazetearsivi.milliyet.com.tr/>)
14. «Ազգ» 4 մարտի 1992թ.
15. «Հյուրիեթ» 26 մարտի 1992թ. ("Hüriyet" 26 Mart 1992)
16. Նոյն տեղում
17. «Հայաստանի Հանրապետություն» 25 ապրիլի 1992թ.
18. «Երկիր» 19 մայիսի 1992թ.
19. «Республика Армения» 17 июня 1992г.
20. Նոյն տեղում
21. «Չումհուրիեթ» 7 հունիսի 1992թ. ("Cumhuriyet" 7 Haziran 1992,
<http://www.cumhuriyetarsivi.com/monitor/index.xhtml>)
22. «Ազգ» 18 հունիսի 1992թ.
23. Արդյունքում ամենաշատը շահում է Թուրքիան՝ ցամաքային կապ հաստատելով Աղրբեջանի հետ:
24. սեպտեմբերի 1992թ. ("Cumhuriyet" 18 Eylül 1992,
<http://www.cumhuriyetarsivi.com/monitor/index.xhtml>)
25. «Հյուրիեթ» 26 հոկտեմբերի 1992թ. ("Hüriyet" 26 Ekim 1992)
«Միլլիհեթ» 29 հոկտեմբերի 1992թ. ("Milliyet" 29 Ekim 1992,
<http://gazetearsivi.milliyet.com.tr/>)

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականության ձևավորումը և հայ-թուրքական առնչությունները 1992թ.

Լուսինե Քերյան

ԽՍՀՄ փլուզումը սկիզբ դրեց արտաքին քաղաքական նոր ուղիների մշակմանն ու իրականացմանը Հարավային Կովկասի, Մերձավոր և Միջին Արևելքի տարածաշրջանում: Տարածաշրջանում նոր դեր և նշանակություն ստանձնեց Թուրքիան: Թուրքիայի հետ բնականոն հարաբերությունների հաստատումը Հայաստանի արտաքին քաղաքականության առջև դրված կարևոր խնդիր էր շրջակակրումից խուսափելու համար: 1992թ. տեղի ունեցան Հայաստանի և Թուրքիայի բարձրաստիճան պաշտոնատար անձանց առաջին հանդիպումները, սակայն դիվանագիտական հարաբերությունների հաստատման գործընթացը տապալվեց հայ-ադրբեյջանական հարաբերությունների սրման և դարաբաղյան հակամարտության պատճառով:

Բանալի բառեր՝ Թուրքիա, Հայաստան, հայ-թուրքական առնչություններ, դարաբաղյան հիմնահարց, Դեմիրլ, Լուսինե Տեր-Պետրոսյան, Ռաֆֆի Հովհաննիսյան, Ալիքս Քերյան:

РЕЗЮМЕ

Формирование региональной политики Турции и армяно-турецкие

сношения в 1992 г.

Лусине Керян

После раз渲а СССР начался процесс разработки и осуществления новой внешней политики в регионе Южного Кавказа, Ближнего и Среднего Востока. Новую роль и значимость в регионе приобрела Турция. Важной задачей внешней политики Армении было установление нормальных отношений с Турцией в целях избежания блокады. В 1992 г. состоялись первые встречи высокопоставленных государственных лиц Армении и Турции, но процесс установления дипломатических отношений был сорван из-за обострения армяно-азербайджанских отношений и карабахского конфликта.

Ключевые слова: Турция, Армения, армяно-турецкие отношения, карабахский вопрос, Демирель, Левон Тер-Петросян, Раффи Ованисян, Азербайджан.

SUMMARY

The Formation of Regional Policy of Turkey and Armenian-Turkish Relations in 1992
Lusine Keryan

After the collapse of the Soviet Union the process of a new foreign policy development and implementation began in South Caucasus and Middle East. Turkey has gained a new role and significance in the region. An important task of Armenian foreign policy was the establishment of balanced relations with Turkey in order to avoid the blockade. In 1992 were held the first meetings of senior government officials of Armenia and Turkey, but the process of establishment of diplomatic relations was disrupted due to the exacerbation of Armenian-Azerbaijani relations and Karabakh conflict.

Keywords: Turkey, Armenia, Armenian-Turkish relations, the Karabakh issue, Demirel, Levon Ter Petrosyan, Raffi Hovhannisyan, Azerbaijan.